

ՄԵՆԿ

Տարեկան գինը 7 բուրլ, կես տարվանը 4 բուրլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի

Тифлис. Редакция „Менк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄԵՆԿ“

Ծանօթում է առանձին համարներով հատը 7 կոպէկով, բացի խմբագրատանը, Վ. Մատուրեանի խանութում: ԾԱՏՈՒՐԵԱՆԻ խմբագրատանը (Հարութի տանը), Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրավաճառանուցում (կամուրջի մօտ) ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մագաղանում (Միգրոսի տանը, Երևանեան հրապարակի վրա) և ՍԱՐԳՍԵԱՆԻ ծխախոտի խանութում (Արաքսի վրա տանը):

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒՄ

Թուրքաց լրագիրները չեն աջակցում:— Եւրոպայի տեսութիւնը: Պատերազմական բնույթի Մենք գիտնական մամուլ չունենք: «Тифл. Вестн.» լրագիրը յօդուածը գաղթականների մասին: Դա մակ երեսնից, Դա մակ խորհովից: Դա մակ Գանձակից, Դա մակներ խմբագրին: Դա մակ լուրերը:— Արտաքին տեսութիւնը: Ֆրանսիա: Անգլիա: Թիւրքիա: Արտաքին լուրերը:— Խառն լուրերը:— Յայտարարութիւնները:— Տեղեկացոյց:

ԹՈՒՐԿԱՅ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ ԶԵՆ ԱԶՈՂՎՈՒՄ

Միակ թուրքաց լրագիր որ հրատարակվում էր մեզանում, այն է Բագուի «Ալիսն» լրագիրը, նորերումն դադարեց և իր դադարմամբ ապացուցեց մեզ որ արաբական տառերով հրատարակվող թուրքաց լրագիրը երբեք չէ կարող աջակցութիւն ունենալ:

Թուրքաց լեզուն չունի իր սեփական այբբենարան և թուրքերը ստիպված են գործածել իրանց լեզուի մէջ արաբական գրերը, որոնք թէ գրադիտութիւնը ժողովրդի մէջ տարածելու և թէ տպարանի մէջ գործածելու համար շատ անյարմար են: Արաբական տառերը չունեն ձայնաւոր հնչիւններ ներկայացնող նշաններ, իսկ բաղաձայն տառերը միմեանց հետ կապվելով, կազմում են շատ անգամ պարզ գրագրութեան համար անորոշ, դժուար լուծելի նշանների կոյտեր: Ինքն իրան թուրքաց լեզուն, թէ Կ. Պօլսի մոտ թրված թուրքերէնը և թէ մեր անդրկովկասեան թուրքաց բարբառը, որ անուանվում է Աղբէջանի լեզու, դժուար լեզու չէ, բայց արաբական գրերը որոնք գործ են ածվում այդ լեզուի մէջ, պատճառ են լինում որ թուրքերէն կարգաւ գրել սովորելը դառնում է շատ դժուար գործ: Այդ է պատճառը որ գրագիտութիւնը բոլորովին չէ տարածվում թուրք

ազգաբնակութեան, թուրք ամբողջի մէջ:

Ուրիշ կողմից տպարանական գործը արաբական գրերով սարսափելի դժուարութիւններ է ներկայացնում: Արաբական տառերով մի որ և է գրվածք շարելու համար հարկաւոր է անհամեմատ աւելի շատ նշաններ ունենալ, քան թէ եթէ նոյն գրվածքը շարվէր եւրօպական մի լեզուի տառերով:

Թուրքաց գրականութիւնը (Օսմանեան պետութեան մէջ սկսեց ծաղկել այն օրից, երբ հիմնվեցան Կ. Պօլսի մէջ հայերի ձեռքով թուրքերէն լրագիրներ հայոց տառերով շարած: Հայոց այբբենարանը այնքան հարուստ է հնչիւններով, որ կարող է արտայայտել թուրքաց լեզուի բոլոր հնչիւնները: Գոնէ մեր ասածը ճշմարիտ է օսմանեան թուրքերէնի վերաբերութեամբ: Գուցէ Աղբէջանի թուրքերէն բարբառը աւելի բազմատեսակ և բաղադրեալ հնչիւններ ունենով, չէ կարող բուսականանալ միմիայն հայոց այբբենարանով, այլ կարօտ է մի բոլորովին նոր այբբենարանի ստեղծման, որ լինէր մի խառնուրդ՝ լատինական, հայոց և ռուսաց տառերի:

Ինչ և իցէ հարկաւոր կը լինէր փորձել և փորձը ցոյց կը տար թէ ինչ տեսակ այբբենարան աւելի յարմար կը լինէր մոցնել թուրքերէնի մէջ, միայն մի բան հաստատ կարելի է ասել, որ արաբական գրերը վաղուց է արդէն որ անկարող յայտնվեցան ժողովրդացնել այն լեզուները, որոնց պէտք է ծառայէին գրականապէս արտայայտվելու և որոնց գրագիտութիւնը պէտք է սերմանէին, տարածէին և արմատացնէին ամբողջի մէջ....

Եւ նոյն իսկ այդ դժուար-բաւ բռնելի և հակաժողովրդական արաբական տառերին պարտական է մահմետական աշխարհը որ այդքան դարեր նա մնաց մուսուր անշարժութեան, տգիտութեան մէջ և որ մահմետական ազգերից ոչ մինք միջոց չունեցաւ զարգացնել իր լեզուն և կատարելագործել իր գրականութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Վիզին կէ վեց պաշտօնապէս հեռագրում են հոկտեմբերի 21-ից որ հոկտեմբերի 16-ին գեներալ Գեյման վեր առաւ գրելթէ առանց կռիւ Քեպրի-Քեյ, որտեղից Մուխթար և Իզմայիլ փաշաների ետեի (վերջապահ) զօրքերը յետ քաշվեցան դէպի Հասան-Քալէ: Այստեղ պատահեց կռիւ մեր զօրքերի մի մասի թիւրքաց զօրքի մի մասի հետ: Թիւրքերի կողմից 100 մարդից աւելի սպանվեցան, մնացածները փախան: Նրբ Հասան-Քալէ մասն մեր հետեակ զօրքերը, մեր հեծակազօրքը արդէն բռնած ունէր Կուրուշուկ գիւղը, Երզնումից 18 վերստ հեռու: Թշնամու գլխաւոր դիրքը Գեյ-Բոյ-Նու անտառաված տեղի մօտ է, և այդ գիւղի դիմաց գտնվում են Գեյման և Տեր-Ղուկասով գեներալների գլխաւոր ոյժերը: Բալկանեան թերակղզուց պաշտօնական հեռագիր կայ, որ ռուսները կռուվ վեր առան Տեռեքէն ամրացած դիրքը, որ բաղկացած է 7 մեծ և 30 փոքր մարտկոցներից: Թիւրքերը կորցնելով 100 հոգուց աւելի, յետ քաշվեցան դէպի Պէշեպին: Մեր ամրացած դիրքերը աւելի և աւելի մօտեցում են Գօշի-Գուրնիակից Պէշեպին: Օրկանիէի կողմը մեր հետեակ զօրքերը վեր առան Լուկովեցա: Նէվկէտ-փաշայի զօրքերը յետ քաշվեցան դէպի Օրկանիէ:—Վիզին կէ վեց պաշտօնապէս հեռագրում են հոկտեմբերի 23-ից, որ Հասան-Քալէի մօտ պատահեց գիշերվայ կռիւ մէջ մեր ձեռքը գերի ընկան 1 թիւրքաց փաշա և 120 թիւրք սուլթաններ: Կռիւ միւս օրը պատերազմի դաշտի վրա գտնվեցան և թաղվեցան մեր զօրքերի ձեռքով 500-ից աւելի թիւրքաց զինվորներ: Մեր ձեռքը ընկաւ մեծ քանակութիւն հրացանների և փամփուշտների: Ղարս ամեն կողմից պաշարված է: Հոկտեմբերի 23-ին կանգնեցրած են Ղարսի հարաւաւարեւելեան կողմի մարտկոցների դիմաց պաշարական բառարեանները, որոնց միջոցով պէտք է ռմբակոծվեն յիշեալ ամրացած դիրքերը:

ՄԵՆԿ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ՉՈՒՆԵՆԲ

Այս վերնագիրը տարաբաղադրաբար շատ մեծ ճշմարտութիւն է պարունակում իր մէջ: Մեր վեց պարբերական հրատարակութիւններից ոչ մէկն էլ գիտնական ուղղութիւն չունի: Գիտնական ուղղութիւն ասելով, ես ուզում եմ յայտնել, որ այս վեց հրատարակութիւններից ոչ մէկն էլ նպատակը չէ ժողովրդացնել մեր ազգի մէջ ներկայ եւրօպական գիտութիւնները: Նրկուր վեց հրատարակութիւններից ունեն մի շատ անժամանակակից ուղղութիւն այն է կրօնական. ուղղութիւն:— «Արարտ» և «Հ. Աշխարհ» ահա հայ կրօնական թերթեր, արժանի վաստակ իրանց խմբագիրների միջնադարեան կրօնագիտութեան: Նոյն և «Բարոց» որը կարելի է մեռած համարել: Ուրիշ կողմից «Հ. Աշխարհ» հանդիսանում է զեկալար մեր մանկավարժութեան իր խալիֆայական հանձարի—Ստեփանիէ ձեռքում:

Մնացեալներից երկուսը (Մշակ և Մեղու) ունենալով ընդհանուր գրականական և քա-

ղաքական ուղղութիւն, չեն կարող մասնաւորապէս ծառայել վերոյիշեալ նպատակին: Մնում է «Փորձը» որը իր միամեայ գործունեութեամբ ցոյց տուաւ, որ կարող է օգտակար օրդան լինել նա ունի լիակատար միջոց ծառայելու, եթէ ոչ բացառապէս, զոնէ մասամբ վերոյիշեալ նպատակին: Եթէ չեմ սխալվում, նրա պրօգրամային մէջ յիշած են գիտնական գիւրմբաների յօդուածներ, բայց ամբողջ տարի չեղեաց մի այսպիսի յօդուած: Մենք յոյս ունենք, որ «Փորձը» խմբագրութիւնը կաշխատէ լրացնել իր պակասութիւնը մօտիկ ապագայում:

Ներօպական ազգերի քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքից մենք հայերս դուրս ենք մնացել: Ոչ թէ միայն մենք, այլ և նոյն իսկ եւրօպական ազգերից շատերը հիմա զարթնած քնից, աշխատում են իրանց սեփականացնել եւրօպական գիտութիւնները, եւրօպական քաղաքակրթութիւնը, աշխատում են պատուաստել նրանց հայրենի հողի վրա, մոցնել ազգային մտքի շտեմարանի մէջ, որովհետեւ նրանք են ազգերը ազատում խաւարից, նախապաշարմունքներից, մտտիապաշտութիւններից, տնտեսական աղքատութիւնից և վերջապէս փրկում են ազգերին կորստեան անդնդից:

Մի և նոյնը պիտի անենք և մենք: Ներօպայի ամեն մի անկիւնում ցրված հայ ուսանողների պարագն է քաղաքակրթութեան վառ լապտերը մոցնել հայրենի խաւար աշխարհը: Նրանք պիտի քաղաքակրթութիւն կոչված արեգակն աղբիւրի ջրով յազդեցնեն իրանց հաղաւարտ, միլիոնաւոր եղբայրակիցների մտաւորական ծարաւը:

Այսպէս ուրեմն նոր սերունդի վրա մեծ բարոյական լուծ կայ: արդե՞ծք կը կատարէ նա իր պարտքը, թէ նա էլ կը թողնէ այդ խնդիրը մի ուրիշ նոր սերունդին կատարելու:

Մօսկվա.

Ն. Արեւելանց

«ТИФЛ. ВЕСТН.» ԼՐԱԳԻՐԻ ՅՕԳՈՒՈՒՐ ԳԱՂՁԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ինչպէս յայտնի է Հայաստանի պատերազմական բեմի քրիստոնեայ ազգաբնակութիւնը ընդունում էր մեր զօրքերը անկեղծ ուրախութեան ցոյցերով: Հայերը իրանց հոգեւորականների առաջնորդութեամբ ընդունած են մեր զօրքերը որպէս ազատիչներին և փրկողներին: Նրբ որ պատերազմական անցքերը ստիպեցին գեներալ Տեր-Ղուկասովի զօրքերին վերադառնալ Նրեանի նահանգի սահմանները, իսկ գեներալ Լուիս-Մէլլեքովին յետ դալ Սօդանուղից դէպի Արիֆայա, ռուսաց կառավարութեան ձեռքում արդէն եղած վեճակների ազգաբնակութիւնը կրկին ենթարկվեցաւ առաջացող թիւրքաց զօրքերին: Այդ զօրքերը պարունակում էին իրանց մէջ վայրենի քուրդերին Վանի նահանգից, որոնք Հայաստանումն էլ նոյն սարսափելի զազանութիւններ կատարեցին, ինչ որ և Բօլշաքիայում: Այդ տխուր ժամանակամիջոցի անցքերը՝ հրկիւնները, Բայազէտի կոտորածները, վանքերի կողոպտելը, գիւղերի ոչնչացնելը իրանց բոլոր բնակիչներով, առանց խնայելու ոչ սեռը, ոչ հասակը,—դեռ ևս կենդանի են ամենքի յիշողութեան մէջ: Սարսափելի երկիւղի մէջ ընկած՝ այն ազգաբնակութիւնը որ գրանվում էր զօրքերի ետեից սկսեց ապստան

քային ուստիկանութեանը, առաջարկելով մի
բուրլ թղթադրամ յոգուտ վերադարձնել և հի-
ւանդ զինուորներն օգնութեան ընկերութեան
Յիշեալ զինուորները յայտնեցին որ այդ մի բուրլ
թղթադրամը նրանք գտած են Երևանի Աստա-
ֆիեմակայա անուանեալ փողոցի վրա: Այդ նուե-
րաուստիկանը մեծ չնորհակալութեամբ ընդուն-
վեցաւ և ներկայցուցաւ պ. զաւառապետին:»

Քանի մի ժամանակից թշուառ Հնդկաստանը
ենթարկվում է ամեն տեսակ տառապանքնե-
րին: Անցեալ տարի, նոյեմբեր ամսին պատա-
հել է Բէնգալիայի ամերիկացի մի մարտիկ և հեղեղ,
որին, եթէ հաւատանք «Galcutta Gazette» լրա-
գրին, 165,000 մարդ զոհ են գնացել: Նրանից
յետոյ խօշորա էր տարածված Հնդկաստանում,
իսկ այս տարի այդ երկրի շատ տեղերում սառ-
տիկ սով է տիրապետում:

Ein Lehrer der DEUTSCHEN Sprache
wünscht Stunden zu ertheilen. — Sprech-
stunde von 3—4 Uhr Nachmittags. —
Саперная улица. № 48.

ԳԵՐՄԱՆԵՐԻՆ Եղուի մի ուսուցիչ կամե-
նում է այդ լեզուից դասեր տալ: Խօսել
պայմանների վրա կարելի է 3—4 ժամ կե-
սորից յետոյ, Սապերնի փողոց № 48. Քիֆ-
խում:

3—3

„ՄԱՆԿԻ“ խմբագրատան
մէջ ծախվում է տպելու ԹՈՒՂԹ-
էժան գնով: Տեսնել կարելի է ա-
մեն օր առաւօտները, մինչև 12
ժամ կէսօրի:

Въ редакціи «МШАКЪ» по
случаю продается дешево ком-
ментарная бумага.

5—5

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿԵՆԴԱՆԵՐԻ ԼՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԵՆԻՑ
ՅԱՅՏՆՎՈՒՄ Է

1. Որովհետև անցեալ մայիս ամսին ընկերութեան հիմնադիր անդամները գրած 173
անձինքներից միայն 52 անձինք մոցրին ընթացող տարվայ համար իրանց անդամական վը-
ճարը, մնացածները և նոյնպէս նոր անդամ գրվող ցանկացողները հրաւիրվում են շուտով
մոցնել տարեկան վճարը ընկերութեան գանձապահ պ. Ա. Գ. ՍԵՐԳԵՅԵՎԻՆ (Թիֆլիսի Փո-
խագարձ Կրեդիտի ընկերութիւն վարչութեան մէջ), որից յիշեալ անձինք կը ստանան
իրանց անդամական տոմսակը և մի մի օրինակ ընկերութեան կանոնադրութեան:

2. Հերթական նստերը ընկերութեան, սկսած նոյեմբեր ամսից ներկայ թւի, նշանակ-
վում են՝ ընկերութեան վարչութեան համար ԻԻՐԱՔԱՆՁԻՐ ԱՄՍԻ 5-ին, իսկ ընկերութեան
անդամների ընդհանուր ժողովների համար իւրաքանչիւր ամսի 20-ին: Ուրեմն բոլոր ան-
ձինքը, որոնք ունեն որ և է գործ ընկերութեան մէջ, թող բարեհաճեն հաւաքվել նշանակ-
ված օրերին Սերգիեյեւի փողոցի վրա գտնվող Ձիթախովի ամանը при Канцелярии Управления
Кавк. Конно-заводе. Округа, Сергиевск. ул. д. Читахова.

1—3

Մասնագէտ արուես-
տական առարկաներ շի-
նելու և ոսկով պլումբել-
լու:
Ընդունում է 10 ժա-
մից մինչև 4 ժամ: Կա-
րելի է խօսել ամեն լե-
զուներով:
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ
ԴՕԿՏՕՐ Լ. ԲԵՐՆԱՐԴՕ-ԲԵՐԿ-
ՄԵՆԻՐ
Պատուաւոր անդամ Լճիգոնեան առարկա-
բուժական հիւանդանոցների

17—25 (1)

Մամուլի տակից դուրս եկաւ Գ. ԱՐՈՎԱՆՆՅԻ
Հայոց պատմութիւնը, երկրորդ տպագրութիւն,
ընտիր թղթի վրա և մաքուր տպած, ցանկա-
ցողք ձեռք բերել կարող են զիմեւ հրատարա-
կիչ պ. պ. եղբարց Զ. և Բ. Արովաննյաններին,
սոցա խանութը Միխայէլովիկի կամուրջի վրա:
Գինը հասով առնողներին համար 60 կօպ., իսկ
2-ից աւելի գնողներին 50 կօպէկ: 1—2

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ Հայոց կենդանի լե-
զուի ԴԱՍԵՐ և ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ:
Հարցնել «ՄՇԱԿ» լրագրի խմբագրա-
տանը: 10—10

ԲԱՐՈՒՏՁԵՎ Ի ԿԱՆՏՕՐԸ

ԹԻՖԼԻՍՈՒՄ Ըտամանակի փողոցում, Կվիտկովսկու տուն,
Մուգէումի հանդէպ:

1 ԱՌՆՈՒՄ Է և ԾԱՍՈՒՄ Է 5% բանկային տանող (վերգրիչի)
տոմսակները:

2. ԾԱՍՈՒՄ Է 5% տանող տոմսակները պայմանաժամի յետո-
ւ ձգովեամբ 12 մինչև 24 ամսով և աւելի, 20 բուրլի բէհով:

3. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է գրամական զնուններ՝ տարեկան և կէս տա-
րեկան պայմանաժամերով և մինչև պահանջ (պրօցէստները կանտո-
րայի հետ համաձայնութեամբ):

4. ՓՈՒ Է ՏԱԼԻՍ գումարներ տոկոսաբեր թղթերի գրաւակա-
նով 6 և 10% բօրսային կուրսից պակաս. տանող տոմսակների վրա
փոխ է տրվում գումարը մինչև 180 բուրլ և վերցվում է 12% տա-
րեկան ծախսերով: Վճարքը թոյլ է տրվում մաս մաս:

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրաւ-
դնելը, վճարում է մնացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ
բանկերի մէջ գրաւ դրած պարտաւորութիւններով:

6. ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է տանող տոմսակներ հանդման տիրաժից:

7. Տօկոսաբեր թղթերի գրաւականով ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սե-
փական զարանտիայով, կրկնապատկելով սեփականատէրերի եկամուտը:

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է պահելու համար բոլոր տոկոսաբեր թղթ-
երը մինչև պահանջ:

Իոլոր տեղեկութիւնները այն ամենի վրա, որ վերաբերվում է
բանկային օպերացիաների, թղթերի գնի, տարած գումարների և
տիրաժների մասին, կարելի է անվարձ ստանալ կանտօրայում:

16—21 (1)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ 1877

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 27-ին)		Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ	ՓՈՍՏ		«ՄՇԱԿ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
Ոսկին (պօլումբերիայը)	8	60	—	Կովկասի և Ան-	—	Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան: Մինչև Միխայէլովի (խառն գնացքը) երկկուսեան 5 ժամ. 18 րօպէ:	1) Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ ցրագրիչներ Ռուսաստան և ար- տասան համար ուղարկե- լու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)	գուշի տրակտից՝ երեք- շաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ եր- կուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. փոթի-թիֆլի- սի սեան երկաթուղուց ամեն օր: Նույն ու տրակ- տից՝ չորեքշաբթի և կի- րակի, Բեկիկի և չի տը- րակտից՝ երեքշաբթի և շա- բաթ:	—	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—	—	Անգլիայի և Եւրոպայի զարկերը	1	—	2) Բազուկի ճանապարհը՝ թիֆլիսի փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի:	գուշի տրակտից՝ երեք- շաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ եր- կուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. փոթի-թիֆլի- սի սեան երկաթուղուց ամեն օր: Նույն ու տրակ- տից՝ չորեքշաբթի և կի- րակի, Բեկիկի և չի տը- րակտից՝ երեքշաբթի և շա- բաթ:	—	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—	—	Ռուսաստան	2	—	3) Երևանի տրակտը՝ ամեն օր:	Բաց նամակը ամէ. . .	4	—
Վերջինի 50/100 առաջի փո- խաւութեան տոմ. 100 »	220	—	—	Աւստրիա	3	—	4) Փոթի-թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից:	Ռուսաստանի նամակը Գերմանիա, Աւստրիա Ֆրանսիա, . . .	8	—
Ներկրայ 5% վերգրիչի »	215	—	—	Անգլիա	4	—	5) Նույն ու տրակտը՝ թիֆլիսի փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը շաբաթ օրերը:	Ֆրանսիա, . . .	8	—
Մարտիկ կուրսը 245—50 ֆ.	100	—	—	Գերմանիա	2	88	6) Բէկիկի և չի ճանա- պարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը:	Նիւյուրք (Կ. Պոլիս) Թուրքիա (ցամաք) . . .	8	—
Հոգոնի կուրսը Օդեսայի վրա . . .	10	15	—	Ֆրանսիա	3	75	—	Իտալիա . . .	8	—
Վենայի կուրսը ամէ 143 դր.	100	—	—	—	—	—	—	Սալոնիկա . . .	8	—
Դաւրեթի բարաթը . . .	6	—	—	—	—	—	—	Բուդապէստ . . .	8	—
Առաւօտեան բանկի ակ- ցիան 200 մ. . .	265	—	—	—	—	—	—	Վիեննա . . .	8	—
Փոթի թիֆլիսեան երկա- թուղու ակցիան 125 մ.	125	—	—	—	—	—	—	Բեռլին . . .	8	—
Շաբարը բրօպիլու . . .	9	40	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
» միւս տեսակը . . .	8	80	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
» շաբարաւազը . . .	8	20	—	—	—	—	—	Բուդապէստ . . .	8	—
» արանդիար . . .	8	80	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
» մաքուր վճարած . . .	13	—	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Բամբակը երևանու Ա- մերիկայի սերմից . . .	9	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
Միւս տեսակը հին սերմից . . .	8	50	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Բուրգը թուշի . . .	7	50	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
» թարաւար . . .	3	50	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Ալիւր Շորապալու . . .	2	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
» երևանի . . .	—	—	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Գարին . . .	1	35	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
Մոմը բնածաղկի (свечар) . . .	14	80	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Մետաքս Նուխայ . . .	140	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
Կախեթի ունը . . .	90	—	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Կոկոնը Նուխայ (բոմ) . . .	34	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
Ֆրիդոնը (լաւը) Ագու- լեայ . . .	55	—	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
Կոֆէն մօկօր . . .	28	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—
» լիւանի . . .	—	—	—	—	—	—	—	Սոֆիա . . .	8	—
» արարիկային . . .	26	—	—	—	—	—	—	Կիււի . . .	8	—